

Յակոբ գնաց առ անձկալին իւր Քրիստոս եւ սուգ մեծ անտանելի եթող մեզ, որբացեալ եւ ողորմելի մնացեալ մեզ յօտարութեանս» (8) :

Ուստի Յակոբ Ջուղայեցի իր մահուան օրն իսկ թաղուած է, ինչպէս կը հետեւի նաեւ Ջաքարիա Պատմիչին ճշգրիտ տեղեկութենէն: Բառացիօրէն պէտք չէ իմանալ Հայրապետին Օգոստոս 1ի դաւանութեան իտալերէն մեկնութիւնը, որ կ'ըսէ. «կը դաւանիմ մահուանս ժամէն մի քանի վայրկեան առաջ»: Վասնդի աստուածարեալ Դիտապետը կաթողիկէ հաւատքի դաւանութիւնն ըրաւ Օգոստոս 1ին (9) :

Այս դաւանութեան առնչութեամբ Հոսմի Հաւատոյ Տարածման Սրբազան Ժողովին դիւանական վաւերաթուղթերը կը վկայեն՝ թէ Կ. Պոլսոյ լատին Պատրիարքական Փոխանորդը, Գերպօժ. Գասպարինի, օրեր ամբողջ, Հայրապետին սնարին մօտ կը հսկէ, հողեւոր օգնութիւն կը մատուցանէ, եւ կաթողիկէ հաւատքի դաւանութենէն զատ կը

(8) Նորայր Եպս. Պօղարեան, Մայր Յուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Բ. հատ. Երուսաղէմ, 1953, ք. 59ա.:

(9) Հ. Համազասպ Վ. Ոսկեան, Աւետիֆ, ԻԿ. տարի, Հոկտ.-Դեկտ. 1955, թիւ 10-12, էջ 145-146. Յուսարբեր, 1955, ք. 142, Սեպտ. 20. Archivio S. C. P. F. Cong. Armeni, vol. 5, fol. 598.